Systems Development: Detailed Design Հանձնարարություն

Ընդհանուր

Տվյալ հանձնարարությունը նախագծման փուլի վերջին հանձնարարությունն է: Կատարվելու է համակարգի մանրամասն նախագծում՝ հիմնված պահանջմունքների սպեցիֆիկացիայի վրա:

Ժամկետ

Յուրաքանչյուր խումբ պատրաստելու է գրավոր զեկույց մինչեւ Մայիս 14, 2007.

Ընդհանուր պահանջներ

Տվյալ հանձնարարությամբ մենք սահմանելու ենք համակարգային մանրամասները որպիսի կարողանանք անցնել համակարգի իրականացմանը՝ կոդավորմանը: Մենք պետք է մոդելավորենք երկարատեւ հիշողությունը՝ աղյուսակները, որոշենք օբյեկտների ներքին աշխատանքը, ընդունենք տվյալներ ֆորմաներից եւ որոշենք զեկույցների ձեւը

Հատուկ պահանջներ

Համզվել, որ խումբը կատարել է բոլոր հանձնարարությունները:

<u>Աշխատանքի պլանավորում</u>
Պլանավորել գործողությունները. Մշակել աշխատանքային պլան յուրաքանչյուր գործողության համար:

<u>Աղյուսակների նախագծում</u>
Յուրաքանչյուր աղյուսակի ստրուկտուրայի դոկումենտավորում. Պատրաստել աղյուսակներ (excel spreadsheet): Յուրաքանչյուր մատրից համապատասխանեցնել մի աղյուսակի հետ եւ ներառել հետեւյալ դաշտերը:

- Դաշտի անունը՝ իմաստալի անվանում, որը կնկարագրի պահպանվող տվյալը
- Տվյալի տիպը՝ տառ, թիվ, լողացող կետով թիվ, այլ բան.
- Բանալի՝ ոչ, primary key, foreign key, Եթե foreign key, ապա նշել կապակցված աղյուսակի անունը
- Նկարագրություն՝ մի նախադասությամբ նկարագրել դաշտը, դաշտի նպատակը…

Որպես կանոն դաշտերի քանակը կախված է աղյուսակից՝ նախագծումից եւ պահանջներից, մինչդեռ բոլոր աղյուսակները պետք է պարունակեն հետեւյալ 2 դաշտերը՝ տողի ավելացման **ամիս/ամսաթիվ/տարի** ու վերջին ձեւափոխության **ամիս/ամսաթիվ/տարի**

<u>Ֆորմաների եւ զեկույցների նախագծում</u>
Ստեղծել բոլոր ֆորմաների եվ զեկույցների մոդելներ: Մոդելները պատրաստելու ժամանակ կարելի է օգտվել գրաֆիկական գործիքներից: Փաթեթը պետք է ներառնի՝

- Մենյուները եւ հիմնական պատուհանները
- Գրառումներ ստեղծելու, ընտրելու, փոփոխելու եւ ջնջելու պատուհանները
- Փոփոխականների հավաքագրման ֆորմաներ, որոնց հիման վրա գեներացվելու են այլ պրոցեսներ կամ SQL հրամաններ
- Համակարգի կողմից գեներացվող զեկույցներ

<u>Կրիտիկական կոդի նախագծում</u>
Համակարգում սահմանած տրանզակցիաներից ընտրեք երկու ամենաբարդը: Հիշեք, որ տրանզակցիաները դիագրամներում նշանակվում որպես օվալներ եւ նկարագրվում հաջորդականությունների դիագրամների միջոցով:

Նախագծել ընտրված եկու տրանզակցիաներից մեկի կոդը հիմնվելով համագործակցության դիագրամից. Երկրորդը նկարագրել փսեւդոկոդի միջոցով:

Ի գիտություն՝ անկախ այն բանից, որ ընտրվել են երկու ամենաբարդ տրանզակցիաները, ցանկալի է տվյալ հանձնարարությունը կատարել բոլոր այն տրանզակցիաների համար, որոնց ներքին աշխատանքը համեմատաբար բարդ է եւ ակնհայտ չէ նույնիսկ նայելով այդ տրանզակցիաների գործողությունների հերթականությունների դիագրամը:

Վերջնական զեկույց

Պատրաստել զեկույց, որը կներառի աշխատանքի պլանավորումը, բոլոր հանձնարարությունները: Պատրաստել նաեւ 3 պարբերության սահմաններում

ամփոփիչ զեկույց՝ նշելով տվյալ փուլում ձեռք բերված կարեւորագույն հայտնագործությունները: